ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

3301 ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ.՝ +374 60517830, +374 28544296 , էլ-փոստ՝ syunik@mta.gov.am

«15» հունիսի 2018թ. № 03/10/3131-18

Ձեր « 12 » հունիսի 2018թ. N

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ նախագահ տիկին Շ. Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան ՀՀ Սյունիքի մարզպետին ուղղված Ձեր հարցման, հայտնում ենք, որ ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 27.11.2014թ. N 01/20/6378-14 հանձնարարականի՝ ՀՀ Սյունիքի մարզպետի համապատասխան կարգադրությամբ տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ է նշանակվել մարզպետի խորհրդական Վ. Հովհաննիսյանը:

Այնուհետ այդ գործառույթը իրականացրել է աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետը:

2017թ. մարտ ամսից տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատուի գործառույթներն ի պաշտոնե իրականացնում էր մարզպետի մամուլի քարտուղարը:

Ներկայումս թափուր է թե մամուլի քարտուղարի, թե տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի պաշտոնները և նշված գործառույթը աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ ժամանակավորապես իրականացնում են առանձին ստորաբաժանումների ղեկավարներ:

Առաջիկայում, նշված թափուր պաշտոնները համալրվելու դեպքում, համապատասխան իրավական ակտով կնշանակվի նաև տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձ, ինչի մասին կիրազեկենք Ձեզ:

Հարգանքով՝ **Ռ.Սարգսյան**

Կատարող՝ Ա. Վանյան
Հեռ.՝ (0285) 44287
էլ.փոստ՝ syunik@mta.gov.am